

Օրադրուկցիայի ժամանակ ձեռքբերակալ-վեցին մի քանի ուսանողներ։ Յերեկով իրաւարանական ֆակուլտետում կայա-ցու ալրոֆ. Օրգորովի մի գասարտու-թիւնը։

Մօսկվա.—Անկարգութիւններն ժառ-նակեցու համար կայանուորվեցին 130 ուսանողներ. 55 հոգուս արգելվեց ընտելել Մօսկվայում մինչև ուսե-ղացված պանդորութեան վերջնալը։

Կազան.—Պարսպմունքները համա-սարանում ընթանում են սակաւ թուով ուսանողների ներկայութեամբ։

Օղեսսա.—Համալսարանի բժշկական ֆակուլտետում պրոֆ. Մանիօվիկիի դասախոսութեան ժամանակ կատար-վեց քիմիական օգտորուկցիա։ Կառ-նաւորվեցին երկու ուսանողներ։ Մա-ցած ֆակուլտետներում պարսպմունք-ները շարունակվեցին նորմալ։

Կանանց բարձր դասընթացներում փորձ եղաւ խնայարել դասախոսու-թիւնները։ Ձեռքբերակցեցին 16 ուս-կընդուններ։

ԹԻՒՐԿԻԱ ԵՒ ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
7 փետրվարի

Կ. Պոլս.—Առևտրի և ժողովրդական լուսաւորութեան նոր միջնորդներ չը նշանակվեցին։ Առևտրի միջնորդութեան գործերը ժամանակաւորապէս վարում է մեծ վեզիրը, ժողովրդական լուսա-ւորութեան գործերը՝ ֆինանսներ մի-նիստը։

Ներքին գործերի նոր միջնորդը հրահանգաբեր իշխանութիւններին խտաւորոյն օրինապահ լինել և խորու-թութիւն չը դնել օսմանն ու ժողո-վուրդներ միջև և պահպանել կապի-տուլացիան, որ կը վերանայ միայն այն ժամանակ, երբ մեծ պետութիւն-ները կը համոզվին թիւրքաց կառավա-րութեան հաստատուն մտադրութեան մէջ՝ պաշտպանել սահմանադրութիւնը, կարգու կանոնը և ազգաբնակչութեան ի-րաւունքները։

(Լրագիրն և րից)

Թիւրքաց արտաքին գործերի մի-նիստը Ռիֆատ-փաշան յայտնեց «Daily Mail»-ի թղթակցին, որ թէև պաշտո-նապէս թիւրքաց և անգլիական կառա-վարութիւնների միջև Բաղդադի եր-կաթիւնուր մասին բանակցութիւնները չեն սկսված, այնուամենայնիւ դիպլո-մատիական նախնական քայլերը վեր-ջացած են։

Թիւրքիան գտնում է, որ Անգլիան սակարական մեծ շահեր ունի այն շրջանում, որ ընկած է դէպի Պարսից ծոցը, և թիւրքաց կառավարութիւնը ամեն միջոց ձեռք կանւնէ, որպէսզի այդ շահերը մնան պաշտպանված։ Կառավարութիւնը ձգտում է շահագործել Բաղդադի երկաթուղու կառուցման մէջ չափ ֆրանսիացի և անգլիացի դրամատներին, թէև, ի հակառակ, Անգ-լիայի շահերը բաւականին զերակշռում են Թրանսիայի շահերին։

Արդեւեակ Բաղդադի երկաթուղադէ-րնկերութիւնը կօնցեսիսի ունի շարու-նակելու գիծը մինչև Պարսից ծո-ցը, ուստի թիւրքաց կառավարութիւնը բանակցութիւններ է վարում ընդերու-թեան հետ, իսկ յետոյ բանակցութիւն-ներ նաև Անգլիայի հետ։

Այն հարցին, թէ Անգլիան ի՞նչ հակո-ղութիւն է ունենալու գծի վրա մինչև Պարսից ծոցը, Ռիֆատ փաշան պատաս-խանեց, որ թիւրքերի կը գերադասէր ի հարկէ, որպէսզի գիծը թիւրքական լինի, սակայն դա մանրամասնութիւն է, որպիսին կը պարզվի բանակցու-թիւնների ընթացքում։

«Le Matin»-ը «ամենաարժանա-ւատ աղբիւրներից» հաղորդում է ռուս-գերմանական համաձայնութեան հիմնա-կան կէտերը, որ այս օրերս, լրագրի ստեղծի կը ստորագրվի։

Ըստ համաձայնութեան, Ռուսաս-տանը, որ դեռ մի քանի տարի ստաշ-դէմ էր Բաղդադի երկաթուղադէ-րի կառուցման, գլխաւորապէս ռազմագիտա-կան տեսակէտներից, այժմ այլ ևս չէ դիմադրում նրան և պարտաւորվում է արգելք չը լինել օտարազգիների մաս-նակցութեամբ յիշեալ երկաթուղու կառուցման գործում։

Գերմանական կառավարութիւնը իր կողմից յայտնում է, որ Գերմանիան շահեր չունի Հիւսիսային Պարսիցի-անում և որ նա չէ ձգտել ոչ ուղ-ղակի, ոչ էլ անուղղակի կերպով կօնցե-սիսներ ստանալու այնտեղ երկաթու-ղին, խնդիրներ, հետագիւր կառու-ցանելու համար։

Ռուսաց կառավարութիւնը պարտա-ւորված է շինել միացած գիծ այն երկաթուղիներին միջև, որ նա կը կառուցանէ Հիւսիսային Պարսկաստանում Բաղդադի գծի հետ։

Վերջապէս, գերմանական կառավա-

րութիւնը յայտարարում է, թէ Գեր-մանիան չի կառուցի և ոչ մի երկա-թուղի այն շրջանում, որ ընկած է Բաղդադի գծի և ռուս-կառավարութեան սահմանագիծի միջև դէպի հիւսիս իս-նեկէնից, իսկ ռուս կառավարութիւնը կողմնակից է Հիւսիսային Պարսկաս-տանում գերմանական առևտրի նկատ-մամբ արգելու հաւասարութեան սկզբունքին։

Մայսիկ.—Իմամ Եահիայի և շէյխ Իդրիսի միացեալ ոյժերի դիմաց թիւր-քաց զորքերն անգոր են Իէպի Սա-հաւ և Հօդէյթա միահագմից յարձակվե-լու մասին խօսք անգամ չէ կարող լինել։

Անընդհատ զօրքեր են մեկնում Եմէն։ Ձիւղորական միջնորդը հրահանգեց լրա-ցուցել ծառայութեան կոչել պահեստի գրեւորներին Մայսիկի վրայէթում։

Պահեստիները Մօսսաութիւն և Կոս-սօվայի վրայէթներէ արդէն եկան Սա-լօնիկ, բայց մնացել են այստեղ փոխա-դրել միջոցների սպասելով։ Կառավա-րութիւնը մեծ դժուարութիւնների է հանդիպում հարկաւոր թուով շողհիւս-ւեր ձեռք բերելու մէջ։

Մայսիկ.—Այս օրերս նօւօ-Բազարի սանջակի սահմանագիծին Բօնիայից եկեղները գրաւեցին թիւրքերին պատ-կանեալ հողամասերը։ Երբ, վերջինսե-րի խնդրանք, եկան թիւրքաց զօրքե-րը բօնիայցիներին յետ նահանջնե-լու նպատակով, նրանց օգնութեան հասաւ աւստրիական ժամդարձիւրին և կըրկ բացեց թիւրք զօրքերի վրա։

Աւստրիական զինուորական միջնորդը խտաւորում է յետ կանչել ժամդար-մէրիային, որը մինչև օրս մնում է թիւրքաց երկրի վրա։ Գրաւած հողա-բաժինները համարվելու են վիճելի։

Թիւրքաց զինուորական միջնորդը հրահանգեց՝ «Ամեն միջոցներով խտաւորել գնված ընդարումներից ստա-տիսցիների հետ»։

Բերլին.—Ք. С. ДОВО.-ի թղթակցի հետ խօսելիս բալկանական մի աչի ընկնող դիպլոմատ ստել է. «Գրութիւն-նր Բալկանում սուր կերպարանք է ստանում օրէ-ցօր։ Գրանքը հարաւոր են լուրջ դէպքեր։

«Երիտասարդ-թիւրքերի աղբիւրվա-դարականութիւնը Բաղդադի և Յու-նաստանի վերաբերութեամբ ամեն զա-րու սահմանից անցել է։ Երիտասարդ-թիւրքերի կօմիտտը պահանջում է, որպէսզի Բ. Դուռը ուղիղաւորում ու-ղարկէ բաղդադական և յունական կառավարութիւններին՝ պահանջելով եր-կու շրջափակ մէջ իւր կանչել հրո-սականութիւն Մակէդոնիայից։

«Այն դէպքում, եթէ Բ. Դուռը կը հնազանդվէ կօմիտտին, — պատերազմն անխուսափելի է։

«Բաղդադի և Յունաստանի միջև կատարվում են դադարի բանակցու-թիւններ միացեալ կերպով պատերազ-մական գործողութիւններ սկսելու թիւր-քիայի դէմ։ Բաղդադի զինուորական շրջաններում ծարաւ են պատերազմի և միանգամայն հանդիված են այդուր-թեան մէջ։ Իսկապէս, գէշեր կոչելու դէպքում Բաղդադիան կարող է ունե-նայ 400,000 զինուոր։

«Աւստրո- բաղդադական դաշնակցու-թեան մասին տարածված լուրերը, որ հարկէ, անհիմն են։ Աւստրիան, կապ-ված լինելով Գերմանիայի հետ, անըն-դունակ է որեւէ քայլ անել թիւրքերի դէմ։ Բաղդադիան այդ պատճառով, ընկալն է, յայտ էլ չէ դնում Աւս-տրիայի աջակցութեան վրա։ Սօփիա-յում այն կարծիքն է տիրապետում, թէ անհրաժեշտ է օգտվել րօպէից, քանի թիւրքերն թոյլ է, և կուճել մա-կէդոնական հարցը manu militari.»

Պարիզ.—Պրանսիայի և Թիւրքիայի միջև Անատոլիայում երկաթուղային կօնցեսիաներ տալու հարցի վերաբե-րութեամբ բանակցութիւններ վարելու ժամանակ պարզվեց, որ կօնցեսիաներ ստանալու համար նախօրօք անհրաժե-շտ է Ռուսաստանի համաձայնութիւնը։ Այդ համաձայնութիւնը ոյժ է ստացել թիւրքերի հետ կապված դաշնագրով։ Բացի դրանից, Ռուսաստանը շահադ-րույթով է ինչպէս իր սեփական սահ-մանները, այնպէս և Պարսկաստանի սահմանները պաշտպանելու մէջ։

Սլաւոնիայում երկաթուղիներ կառուցելը ոչ միայն ռազմական, այլև առևտրական նշանակութիւնով կարող է օգտգոյնից առաջ բերել Աւստրիայի, Իտալիայի և Սերբիայի կողմից։ Աւստի և ներկայ դէպքում անհրաժեշտ է վա-րօքը բանակցութիւններ սկսել յիշեալ պետութիւնների հետ։

Օղեսսա.—Նախկին շահին մօտ մի անձն հաղորդում է, որ Մահմեդ-Ալիի վճիռը՝ ընդմիջու հետնալ Ռուսաստանից՝ արգաւի-ք է ռուսական դիպլոմատիայի դէպի նրա անձը ցոյց տուած «առանախորտ վերաբե-ր-

մունքի»։ Շահը, նրա ասելով, Ռուսաստա-նից սպասում էր աշակցութիւն իր դուռ-թեան մէջ, անգամ չը բացասելով վերստի Պարսկաստան վերադառնալու։ Հնարաւորու-թիւնը Շահի կարծիքով՝ ռուսաց դիպլոմա-տիան պօստդանան տեսակցութեան ժա-մանակ հնարաւորութիւն ունէր հարց բարձ-րացնել նրա դուռթիւնը բարեկաւուր մա-սին։

Այժմ, ճանապարհորդելով Եւրօպայում, էկեշահը, ինչպէս ասում են, «պատահմամբ համոզվեց», որ յանձին զերմանական դիպ-լոմատիայի նա կարող է ունենալ դաշնակ-ցի և որ, առնաւորաբ, Գերմանիայում կը հանդիպէ լուսաւորչ վերաբերմունք դէպի ինքը։ Այդ պատահաւով էլ շահը վճիռ էր տեղափոխել Գերմանիա—Գրեզդէն կամ Փրանկֆուրտ։ Իր մօտ գտնվող ռուս օֆի-ցերին շահը կազատէ պաշտօնից։

Էկեշահի յայտարարութիւնը կարեւոր քաղաքական նշանակութիւն ունի Գերմա-նիայի Պարսկաստանում արած վերջին քայլերի հետ հանդերձ, ուր գերմանացիները ընդգայնում են իրանց աղեկցութեան շըր-ջանը։

Շահն արդէն կարողացել է այցելել Աւստրիա, Փրանսիա, Իտալիա և Գերմանիա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ և ՍՈՒՔ Պ. ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԱՆՆԻՆ

Միայն երկու խօսք պ. Թումանյանին, որ այնքան խառն քննադատում է իմ յօ-դուածը ճանարանի և թեմական դպրոցնե-րի մասին։

Պ. Թումանյանը իր մեծ հաշիւները ունի «Մշակի» այժմեան ղեկավարների հետ և իմ յօդուածը դարձնել է մի պատմական, ա-ռի՞թ՝ կողմնակի նորոգածներ տալ նրանց։ Այդ տեսակ բանակուր են ոչ ճաշակ ու-նեմ և ոչ իսկ ժամանակ։

Ան ինչո՞ւ միայն երկու խօսք պ. Թու-մանյանին, որ աւելորդ երկար բարակ խօս-սում է ոչ էական հարցերի վրա, մի կողմն թողած այն մեծ հարցը, որ ես դրել եմ և որին նա խուսափում է պատասխանել։

Հարցը նրանում չէր և չէ, որ մեր հո-գեւոր դպրոցների աշակերտները ձգտում են մտնել համալսարան և դառնալ փաստաբան կամ բժիշկ։

Հարցը նրանում է միայն նրանում, թէ թէ աղբիւր կարող են ճանարանի և թեմական դպրոցների աշակերտները չը սովորել կրօն, չընդունել եկեղեցի։

Անընդհատ պահանջում էր, որ իմ քննա-դատը տար պատասխան այդ հարցին։ Պա-տասխան չը կայ։ Միայն կարելի է են-րադրել, որ պ. Թումանյանը գիտէ այդ բոլորը և չշատ նեղանալով» պատճառ չու-նի։

Այդ էլ պ. Թումանյանի խղճը և ճաշ-ակի հարցն է...

Սե աւելորդ նա պատմութեան է դիմում։ Միթէ պատմութեան մէջ եղել են այն ծանր, յուզիչ դէպքեր, որ դրոշմում են մեզ բոլորիս՝ դարձնելու ամենակարգ ուղադրու-թիւն մեր ճանարանի և մեր թեմական դպրոցների վրա, այն ծանր, յուզիչ դէպ-քեր, որոնց մասին խօսելը դեռ շատ է շատ վաղ է...

Այդ կողմից «Մշակի» խմբագրութեան ակ-նաբեր շատ հասկանալի էր նրանց, որ խեղ-ուեն խորհելու և սերտ գրաւոր համար մտալի չէր արժան այդ ակնաբերը։ Կարճ ժամանակամիջոցում շատ քան քանդիցե-յա տա քիչ բան մնաց։ Նորից պէտք է սկսել, նորից շինել Միում է բոլորիս մի ծանր աշխատանք։ Ամենահեշտը քանդել է և ծաղրել, ծաղրել աւերակների վրա...

Մեր եկեղեցին ծանր դրութեան մէջ է։ Մեզ անհրաժեշտ են լուսաւոր հոգեւոր-կաններ։

Միայն մեր հոգեւոր դպրոցները կարող են տալ մեզ այդպիսի հոգեւորականներ։

Հոգեւոր դպրոցներն ունենք։ Ռեւինն ինչն է մեզ պակասում։ Ասում են՝ ցանկալի է, որ մեր դպրոցների աշակերտները մանեն համալսարան, դառ-նան փաստաբան և բժիշկ։ Թո՛ղ Ո՞վ է խառ-դարում։ Միթէ դա զէմ էինք մենք գրում, կամ միթէ դա զէմ էինք կուռում։

Ինչքէ, երբեք մեր դպրոցները պիտի լինեն լոկ մի ճանապարհ համալսարան մտնելու համար, եթէ մեր դպրոցները տալու չեն ընաւ կամ համարեն ընաւ լուսաւոր հոգե-ւորականներ, և գլխաւորը, եթէ մեր հոգեւոր դպրոցների նշանաբանը պիտի լինի արհա-մարկէ կրօն և եկեղեցի, յանուն որ և ինչ ա-դատամուտեան մենք պիտի պահպանենք այդպիսի հոգեւոր դպրոցներ։

Դուք անանդատացնում եք անգամ Գրե-ւոր Արծրունու ուրուականը։

Եթէ նա տեսնէր այն մեր «ազատամիտ-նեան», որոնք հրաւիրվել էին էշմիճիմն մեր գործերը բարեկարգելու համար և որոշում էին... Կաթողիկոսին և մեր բոլոր հոգեւ-րականներին փնտել վանքերի, եթէ նա լսէր այն «ազատամիտներին», որոնք մեր եկեղեցի-ները, վանքերի և դպրոցների հոգեւոր որո-շում էին բաժանել և տալ մեր հարկան թիւրքերին, միթէ մի քով է կանոն էր, որ Գրեւոր Արծրունին կը հասնէր նրանց, կը համարէր նրանց իրան դադա-ւաբարկեցիներ։

Ինչու դուք տարակուսանք մէջ էք մնա-

ցել, թէ աղբիւր են դրանց ազատամիտ եմ հասկանում թէ ազատական...

Ոչ այս և ոչ այն։ Դժբաղդարաբ արդէն վաղուց մեզանում ազատամտութիւնը դարձել է անմտութիւն։ Ես անմիտների մասին եմ խօսել։

Ազատամիտը կասէ հայը հայ է, լուսա-ւորչական, կաթօրիկ, բողոքական, ողջ միե-նոյն է։

Անմիտը կասէ՝ հոգեւոր դպրոցներում կրօ-նը աւելորդ է, և դուք աւելացնէ՝ հայ հո-գեւոր դպրոցներում կարելի է քարոզել կա-թօրիկութիւն և բողոքականութիւն...

Հոգեւոր դպրոց տաւոց կօնիկ, հոգեւոր դպրոց մեր եկեղեցին արժամարտոյ, դա մի անմտութիւն է և անհեթեթութիւն։

Կարգադէր նորից մեր դպրոց, վերլուծե-ցե՛ք մեր միտքը, ոչ յեղաշրջելով, և դուք կը տեսնէք, որ մեր պահանջը իրաւացի է, մեր պահանջը ազգի պահանջն է՝ հոգեւոր դպրոցները—հոգեւոր դպրոցներ պիտի մնան։ Իսկ եթէ մեր ճեմարանում, մեր դպրոց-ներում մեր կօնը, մեր եկեղեցին պիտի արժամարկվին, թող փակվեն։

Գր. Չախուշեան

ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Երեւուշաթի, փետրվարի 7-ին կայացած քաղաքային դումայի նիստում, ի թիւս այլ հարցերի, քննութեան առնվեց և վարչու-թեան առաջարկը՝ ուղարկել Պետերբուրգ քաղաքապետին Ա. Խառնիսանին և անիւ-տարական-բժշկական տեսուչ Կ. Ստեփա-նեանին, մասնակցելու Թիֆլիսի կողմից այն ժողովին, որ ներքին գործերի մինիս-տրութիւնը գումարում է փետրվարի 22-ին և 28-ին՝ մշակելու ծրագիր և միջոցներ խօսքի և ժամապախի դէմ կուռելու համար։

Դուման հաստատութիւն տալով այդ առա-ջարկին, որոշեց միևնոյն ժամանակ տալ Ա. Խառնիսանին արձակուրդ 1/2 ամիս, որպէսզի նա կարողանայ Պետերբուրգում միջնորդել ուր հարկն է, ընթացք տալու բոլոր այն գործերին և միջնորդութիւննե-րին, որոնց դուման յարգանք է և որոնք մինչև այսօր անսովորելի են մնում։

Ի նկատի ունենալով, որ դուման դեռ չէ ընտրել քաղաքապետի պաշտօնակատար, ուս-տի քաղաքապետի պարտաւորութիւնները կը կատարէ ժամանակաւորապէս վարչութեան աւագ անդամ Կոչիշանով։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆԱԿՑ

Գ ան ճակ, 31 յունվարի

Սրանից մէկ ամիս առաջ տեղին երկա-թուղու կայարանում սպանվեց Գանձակի ընդհուրը՝ Մաւրաթ Մարտիրոս-Սիրտեան Թարութիւնեանը։

Հանդուցեալի ամուսին զերծակ Ալեքսան Թարութիւնեանը իր սիրելի և անմոռանալի կնոջ յիշատակը ցանկեփայտելու համար, որի եղենական մահը շատ էր խոցել նրա սիրտը, հիտնելով նուէրներ է արել։ 1) ա. Լուսաւորել եկեղեցու դպրոցի չքաւոր ա-շակերտների համար գնեց և հէնց թաղման օրը ներկայացրեց հոգաբարձութեան 2 կարծի 60 արշ. մասնո՞ւր արշինը 1 ր. 30 կ. արժո-ղութեանը, 2) նոյն դպրոցի օգտին 100 ր., որի տուկսվեցով դպրոցում պիտի սովորե-ն երկու չքաւոր երեխաներ, 3) Գրեւորական պա-սի դպրոցի և եկեղեցու շինութեան 100 ր., 4) ոչնչացրեց, ինչպէս լսեցինք, մի աղքատ կնոջ 9 տարեկ աւելի զոյրութիւն ունեցող 100 ռուբլանց պարտաւորութեան իր տոկոս-սիքներով և 5) մի աղքատ երեխայի, որ ներկայումս սովորում է ա. Լուսաւորչի դպ-րոցում, խոստանալ է ինչպէս ծխակաւում, նոյնպէս և քաղաքային դպրոցում, եթէ շա-րունակելու լինի ուսումը, վճարել ուսման վարձը։

Փոխանորդ հայր Լեւոն վարդապետը եկե-ղեցում զգացված դրուատեց Ալեքսան Թա-րութիւնեանի բարի գործը, բարեմտելովով հանգիստ հանգուցելու։

Նոյն օրը եկեղեցում կար և մի այլ նըն-ջեցեալ, Լեւոն Աւետիսեան Դաղաշանցը, որի եղբայրներ Գրեւոր (այն էլ Երեմիա) և Արմինալ Դաղաշանցները իրանց վաղա-թաւում եղբոր յիշատակին նուէրներին ա. Թովհանէս եկեղեցու դպրոցին 50 ր.։

Երէկ, ամիս 30-ին, Պետրոս Սիմօնեան-ցի յիշատակին քաղաքի ա. Թովհանէս աւագ եկեղեցում հանդիսաւոր հոգնահոգիտ կատարվեց փոխանորդ հայր Լեւոն վարդա-պետը զգացված երկար ճառով դրուատեց հանգուցեալի գործերը. եկեղեցում բաւա-կանին բազմութիւն կար։ Գանձակեցի։

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.